

Միբիրախտ

Հիվանդության բնորոշումը. Միբիրախտը սուր ընթացքով վարակիչ հիվանդություն է, որը ընթանում է սեպտիցեմիայով (արյան վարակումով), օրգանիզմի թունավորումով և մարմնի տարբեր հատվածներում կարբունկուլների (ուռուցքների) առաջացումով:

Հարուցիչը Bacillus anthracis միկրոբն է, որը ունակ է սպոր և պատիճ առաջացնել: Միբիրախտի հարուցիչը կենդանուց արտաքին միջավայր թափանցելուց հետո արևի ուղիղ ճառագայթներից ոչնչանում է մի քանի ժամվա ընթացքում, սակայն հողի մեջ ներթափանցման դեպքում պահպանվում է 150 տարուց ավել: Նշանակում է, եթե որևէ տարածքում գրանցվել է սիբիրախտի բռնկման դեպք, ապա այդ տարածքում հիվանդության բռնկման վտանգը պահպանվում է առնվազն 150 տարի:

Հիվանդության տարածման ուղիները. Միբիրախտի նկատմամբ զգայունակ են բոլոր գյուղատնտեսական կենդանիները, **ինչպես նաև մարդը** (տես աղյուսակ 3):

Հիվանդության հարուցիչ աղբյուր են հանդիսանում հիվանդ կենդանիները, որոնց օրգանիզմից բացիլները արտաքին միջավայր են արտազատվում մեզի, կղկղանքի, թքի և կաթի միջոցով: Հոգևարքում գտնվող կենդանիների բնական անցքերից հոսող փրփրախառը հեղուկը պարունակում է մեծ քանակությամբ հարուցիչներ:

Արգելվում է դիահերձումը, քանի որ թթվածնի առկայության դեպքում բացիլները վեր են ածվում սպորավոր ձևերի (մանրէի կայուն ձևի), իսկ նման դեպքում հարուցիչ ոչնչացումը դառնում է շատ դժվար, իսկ եթե թափանցեց հողի մեջ, ոչնչացումը կդառնա անհնար:

Վարակումը տեղի է ունենում.

- ներքին ճանապարհով (կերի, ջրի միջոցով),
- ամբողջականությունը խախտված մաշկի միջոցով,
- աերոզեն (օդակաթիլային):

Հիվանդության տարածման գործում մեծ դեր են խաղում նաև արյունածուծ միջատները, որոնք վարակի փոխանցման օղակ են հանդիսանում այն դեպքում, եթե հիվանդ կենդանուն խայթած միջատը խայթի առողջ կենդանուն:

Հիվանդությունը կարող է ընթանալ էնզոոտիայով, (հատուկենտ բռնկումներից) մինչև համաճարակային (համատարած բռնկում): Հիվանդ կենդանիների մահացությունը կազմում է 80-100%:

Կլինիկական նշանները. Գաղտնի շրջանը տևում է 1-3 օր:

Տարբերում են հիվանդության **մաշկային, աղիքային, թոքային և անգինոզային** ձևերը:

Մաշկային ձև. միկրոբները կուտակվում են մաշկում և ախտահարում են մաշկը, այս ձևը կարող է բուժվել:

Աղիքային և թորային ձևերի դեպքում միկրոբները կուտակվում և ախտահարում են համապատասխանաբար աղիքները կամ թոքերը: Այս դեպքում բուժումը արդյունավետ չէ, անկումները հասնում են մինչև 100%-ի:

Անզինոզային ձև. այս ձևը արտահայտվում է խոզերի մոտ, միկրոբը կուտակվում և ախտահարում է նշիկները (գլանները): Այս ձևը ենթարկվում է բուժման:

Հիվանդությունը ընթանում է կայծակնային, գերսուր, սուր և ենթասուր ձևով:

Գերսուրի ընթացքում կլինիկական նշաններ գրեթե չեն արտահայտվում, հիվանդությունը զարգանում է շատ արագ, կենդանին սատկում է 1-2 ժամվա ընթացքում:

Սուր ընթացքը դրսևորվում է մինչև 41-42°C մարմնի ջերմության բարձրացումով, շնչառության և պուլսի արագացումով ու մկանային դողով: Կենդանիները հրաժարվում են կերից, դադարում է որոճը և կաթնատվությունը: Բնական անցքերից հոսում է փրփրախառը արյուն:

Կենդանիները սատկում են սովորաբար հիվանդության առաջին կլինիկական նշանները երևալուց 2-3 օր հետո:

Ենթասուրի ընթացքում նկատվում են վերը նշված կլինիկական նշանները ավելի թույլ արտահայտմամբ: Ժամանակին իրականացված բուժումը արդյունավետ է:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները. ՀՀ-ում սիբիրախտի կանխարգելման համար իրականացվում է վակցինացում պետպատվերի շրջանակներում:

Կենդանիների մոտ սիբիրախտ ախտորոշելու դեպքում ֆերմերը պետք է ձեռնարկի քայլեր՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով (տես աղյուսակ 4):

Սիբիրախտի բռնկման դեպքում **արգելվում է.**

- կենդանիների ներմուծումը և դուրս բերումը, վերախմբավորումը,
- մսի համար սպանդը, անասնապահական հումքի մթերումը և արտահանումը:
- հիվանդ և հիվանդության մեջ կասկածվող կենդանիների կաթի օգտագործումը: Բուժման ընթացքում հիվանդ կենդանիներից ստացված կաթը վնասագերծում են կամ ախտահանիչ լուծույթներով կամ եռացնելով, այնուհետև ոչնչացնում են: Ջգույշ եղեք, որպեսզի չվնասագերծված կաթը չթափեք արտաքին միջավայր, այլապես կախտահարեք միջավայրը:
- խիստ արգելվում է դիակի թաղումը: Կարելի է այրել կամ գցել բեկարի հոր:

Բուժման համար օգտագործում են հակասիբիրախտային գերիմուն շիճուկ, գլոբուլին և հակաբիոտիկներ:

Կախված սիբիրախտի արտահայտման տեսակից կենդանին կարող է բուժվել կամ շատ արագ սատկել (տես կլինիկական նշաններ):

Արդյունավետ բուժումից և առողջացումից 14 օր հետո կենդանուն պետք է վակցինացնել, որպեսզի նորից չվարակվի: